պատճէնները՝ առաջադրուեց կարգադրել բոլոր Հայոց եկեղեցիներում մայիսի 10-ից մինչև 19-ը գանձանակ շրջեցնել կոյրերի օգտին և գոյացած դրամն ուղարկել կուրաց Հոգաբարձութեան։ 28 ապրիլի, թ. թ. 617—622։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Սինօդին կարգադրել, որ Ղարաբաղի կոնսիստորիայի փաստաբան Բաբաքեխանը անձամբ գնայ Ամարասի վանքը, եթէ անհրաժեշտ է, նաև Ճուշի, որպէս զի վերցնի բոլոր փաստաթղթերը, ծանօթանայ առտեղեան կալուածների ներկայ վիճակի հետ և սկսի անհրաժեշտ դատերը՝ Ամարասի կալուածները պաշտպանելու համար։ 30 ապրիլի, թ. 638։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Մայր Աթոռի Տպարանի Վարչութեան ուղարկել Ղարսի փոխանորդ Տ. Երեմիա վարդապետի միջոցով Ղարսի բանտի գրադարանին կրօնական բովանդակութեամբ ընթերցանութեան գրքեր։ 30 ապրիլի, թ. 640։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Կոնդակ Տփխիսի Կուսանաց վանքի սարկաւագուհի կոյս Հռիփսիմէ Ղանեանցի անունով, որին՝ թեմի առաջնորդի և մայրապետի միջնորդութեան համաձայն, արծաթեայ լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 5 ապրիլի, թ. 488։

Կոնդակ նոյն Կուսանաց վանքի սարկաւագուհի կոյս Կատարինէ Գուլուլեանցի անունով, որին նոյնպիսի արծաթեայ լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 5 ապրիլի, թ. 489։

Կոնդակ նոյն Կուսանաց վանքի սարկաւագուհի կոյս Գայիանէ Ալիխանեանի անունով, որով նոյնպիսի արծաթեայ լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 5 ապրիլի, թ. 490։